

ոչ թուեացի յետ աննել զայս բնակութիւն, եւ տանն վարձուց երկու բնակութեանց ոչ ունիմ հոգ ողորմութեամբ Տեառն զի միայնակ եմ այժմ եւ միայն մնացի առ Աստուած ապաւինեալ եւ անցաւոր կեանս իմ նոքա յանցնեալ եւ սրբոյ հօրն մերոյ: Աերջապէս ոչ կամիմ դալան լինիլ հեռի գոլով յաղբէ իմմէ, այլ ես եւ ապրանս իմ յոտս սրբոյ մերոյ ընծայել ողորմութեամբ եւ կամօք Տեառն: Բայց յոյժ փափագիմ որ հայր մեծաւորն դալ ինձ եւ խոսել յարմարապէս ընդ նմա, զի վաղ կատարելն լաւ է, զի ոչ գիտեմք զկամս Տեառն եթէ յորում ժամանակի կոչէ յաստի կենացս, լաւ է արթուն լինիլ ըստ բանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Գարձեալ ասեմ զի ըստպասել ձեզ հասանել զի եմ միայն: Իսկ վասն երկուց պատկերաց խորանացն ըստպասեմ զալստեան պատկերահանի զի ազդեցի նմա որ դալուց է: Բայց մի ումեք ասիցէք այլ ի ներքոյ ծածկութեան վասն գործոյս զոր կամիմ կամօք Տեառն զի քաջ գիտեք սովորութիւնն քաղքին ասելով յորքան հարուսց է սա անձն եւ ամենայն արեւելեանցիք, եւ զվերագիրս այլս: Ողջ լերուք ի Տէր առ Աստուած ապաւինեալ եւ ի պարծանս հօր մերոյ սուրբ Լուսաւորչի, իցէ թէ առաւեալ տուն Աստուծոյ եւ անուան իւրոյ կառուցեալն յառաջ ընթանալ կամօք եւ ողորմութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Մնամ ըստ ամենայնի

Օգոստոսի 9. 1779:

Յակոբոս Մեսրօբ քեահեայ  
արապեան անարժան արք  
պկս. Լամբրօնի եւ Տարսնի կիլիկեցւոց:

Գարձեալ կամիմ իմանալ ի ձէնջ զերկայ-  
նութիւն եւ զլայնութիւն պատկերաց: